

Հայրապետ Գ. Մարգարյան  
պատմ. գիտ. դոկտոր

## ՍԵՔԵՆՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ «ԳԵՐԱՆԱՅ ԴԱՇՏ»-Ի ՄԱՍԻՆ\*

Վաղ միջնադարում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմության լիարժեք լուսաբանման տեսանկյունից հազվադեպ բարեբախտություն է, որ Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության անցուղարձերն ավանդել է դեպքերի ժամանակակից և ստուգապատում պատմիչ Ղազար Փարպեցին<sup>1</sup>:

Դրանով հանդերձ, ակնհայտ է, որ հայագետները դժվար թե կամովին հրաժարվեն Վահանանց պատերազմի վերաբերյալ նոր սկզբնաղբյուրներ փնտրելու և գտնելու ձգտումից: Որովհետև Ղազար Փարպեցու «Պատմության» նման արժեքավոր սկզբնաղբյուրն անգամ չի բացառում օրինաչափորեն առաջացող հարցադրումը. գոյություն չէ՞ն ունեցել արդյոք այլ հեղինակների երկեր, որոնք թույլ կտան մեղմել մերօրյա հետազոտողների կամա թե ակամա կախվածությունը դեպքերը նկարագրող միակ պատմիչից: Այս առումով առաջին հերթին հատուկ ուշադրություն են պահանջում 5-րդ դարի իրադարձություններին առավել մոտիկ հեղինակների աշխատությունները: Պատմագիտական խնդիրներ արժարժելուց բացի, նման պրպտումներն անհրաժեշտ են նաև զուտ պատմագրական բնույթի հարցերի պատասխանելու համար: Մասնավորապես՝ ծագում են հետևյալ հարցադրումները. եթե Վահանանց պատերազմի դեպքերը չեն արձանագրվել ականատեսների ձեռքով, ապա որքա՞ն ժամանակ և ի՞նչ տեսքով են պահպանվել բանավոր ճանապարհով սերունդներին փոխանցված տեղեկությունները, և դրանցից որո՞նք են ենթարկվել վիպականացման ու անխուսափելի աղավաղումների:

Այս ուղղությամբ պրպտումներ կատարելու համար մասնագետների հնարավորություններն առանձնապես մեծ չեն, քանի որ Վահանանց պատերազմի անցուղարձերին առավել հանգամանորեն անդրադառնում է միայն 7-րդ դարի հեղինակ Սեբեոսը: Նրա վկայությունների սկիզբը լիովին համահունչ է ապստամբության պատճառների վերաբերյալ Ղազար Փարպեցու հաղորդումներին: Ըստ Սեբեոսի՝ հայերը ապստամբել են, որովհետև «եղև յամս Պերոզ արքայի Պարսից բարձունն ամենայն իշխանութեանցն եւ կարգաց եւ արինաց քրիստոնէու-

Գ. (Թ) փարի, թիվ 1 (33) հունվար-մարտ, 2011

ՎԵՄ համահայկական հանդես

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 11. 02. 2011:  
1 Տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, «Սատենագիրք Հայոց», հ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 2303-2375:

թեան»<sup>2</sup>: Փոխարենը լիովին ինքնատիպ է ազատագրական մարտերի մասին հետևյալ վկայությունը. «Յայնժամ արձակէ ի վերայ նորա (Վահան Մամիկոնյանի – Հ.Մ.) Պերոզ արքայ՝ Հոնաց զարյոյժ: Եւ հրաման տայ խիստ սաստի՛ սպանանել զապստամբն, եւ հարկանել զամենայն արու սրով սուսերի: Ընդդէմ սորա աճապարեալ Վահան սպարապետ Լ հագարաւ ընտիր վառելոց, կարգին զունդ առ զունդ եւ ճակատ առ ճակատ, եւ յարձակին ի միմեանս ի ձայն փողոյ տագնապաւ ի դաշտին Գերանայ: Անդ յաւգնութիւն հասեալ աստուածեան Բանն, հողմն սաստկացուցեալ զմրրիկ փոշոյն՝ զգարաւքն. Պարսից հեղոյր, իբրեւ զմութ խաւարի զնոսա պատէր, ի միջարեայ ժամանակի: Սաստիկ կոտորած լինէր երկոցունց կողմանցն, եւ ոչ գոյր ընտրել գդի անկելոցն, ո՛չ զպարսիկ եւ ո՛չ զհայ զարական: Բայց սակայն զարացեալ զարն Հայոց վանեցին անդ կոտորածով զգարն Պարսից, եւ զմնացեալսն փախստական արարեալ հալածական տանէին. եւ դարձան յաղթութեամբ մեծաւ»<sup>3</sup>:

Ակնհայտ է, որ Վահանանց պատերազմի վերաբերյալ Սեբեոսի այս հաղորդումը վիպականացման շունչն է կրում, ուստի պատմաբանները խուսափել են 5-րդ դարի 80-ական թվականների սկզբին ծավալված դեպքերը 7-րդ դարի հեղինակի վկայությունների հիման վրա լուսաբանելու փորձերից:

Վահանանց պատերազմի պատմությանն անդրադարձած գիտնականներից Լեոն, օրինակ, նկատում է. «Վահանի շարժումը, ինչպես բնական էր, հետագա ժամանակներում, մտնելով ավանդությունների մեջ, ստացավ Փարպեցու պատմածից տարբեր գունավորումներ: Այսպես է, օրինակ, այն պատմության մեջ, որ տալիս է 7-րդ դարի հեղինակ Սեբեոսը»<sup>4</sup>:

Համանման եզրակացություն է կատարում նաև Մանուկ Աբեղյանը. «Սեբեոսը գրում է Գերանա դաշտում Վահանի տված մի ճակատամարտի մասին, որ չունի Դազար Փարպեցին: Երևում է, որ նա ժողովրդական գրույցներից առնելով է հաղորդում այդ»<sup>5</sup>:

Այսպիսով՝ Սեբեոսի վկայություններին հավատ ընծայելը և դրանց հիման վրա Վահան Մամիկոնյանի գործունեությունը պարզաբանելը շափազանց դժվար է: Այնուամենայնիվ, ծագում է հաջորդ հարցադրումը. Վահանանց պատերազմի ժամանակ տեղի չի՞ ունեցել արդյոք ևս մեկ խոշոր ճակատամարտ<sup>6</sup>, որի մասին Դազար Փարպեցին թեև տեղեկություններ չի հաղորդում, բայց այդ կռիվների արձագանքը մեզ է հասել ժողովրդական գրույցների տեսքով: Այս կասկածը կարող է փարատվել միայն այն դեպքում, եթե հաջողվի լուսաբանել երկրորդ մութ խնդիրը՝ որտե՞ղ է գտնվել Սեբեոսի վկայություններում պահպանված՝ «Գերանայ դաշտ»-ը, քանզի հենց նրա տեղորոշման հարցն է, որ ցայսօր բաց է մնացել:

Եվ չնայած այն հանգամանքին, որ Սեբեոսի երկը վերջին տասնամյակների ընթացքում անընդհատ գրավում է բնագրագետների սևեռումն ուշադրությունը, բայց և այնպես վերևում մեջբերված հատվածում հիշատակվող «Գերանայ

2 Սեբեոս, Պատմութիւն, «Մատենագիրք Հայոց», հ. Դ, Անթիլիաս, 2005, էջ 469:

3 Նույն տեղում, էջ 469-470:

4 Լեոն, Հայոց պատմություն, հ. II, գիրք I, Երկերի ժողովածու, հ. II, Եր., 1967, էջ 130, ծան. 1:

5 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 430-431:

6 Բ. Պատկանյանը ժամանակին համոզմունք է հայտնել, որ հնարավոր չէ պարզել, թե ի՞նչ ճակատամարտ է նկատի ունեցել հեղինակը, տես История императора Ираклия, сочинение епископа Себеоса, писателя VII века. Перевод с армянского с объяснениями и примечаниями К. Патканова, СПб, 1862, стр. 183, прим. 60.

դաշտ» օտարոտի տեղանունը սրբագրելու կամ բացատրելու փորձեր հայագետները չեն ձեռնարկել<sup>7</sup>:

Այս հարցերին պատասխանելիս արժե քննության առնել հետևյալ վարկածը: **Հնարավոր է, որ երկու պատմիչներն էլ նկատի են ունեցել միևնույն դեպքերը, բայց նրանք ավանդել են միևնույն վայրի երկու տարբեր անվանումները:** Այս դրույթը ընդունելու կամ մերժելու նպատակով անհրաժեշտ է համադրել հայ մատենագրության մեջ պահպանված այն տեղեկությունները, որոնք վերաբերում են պարսիկներին տրված վճռական ճակատամարտի ստույգ տեղորոշմանը:

Վերհիշենք, որ, ըստ Ղազար Փարպեցու, հայոց զորքերը, ճանապարհ ընկնելով Դվինից, «**հասանէին ի գաւառն յԱրտագ, և մատեաք ի գունդն Պարսից՝ բանակէին ի գիւղ մի, որում անուն էր Ներսէհապատ**»<sup>8</sup>: Սակայն, պատմիչի հաջորդ հաղորդումներից ակնհայտ է դառնում, որ Ներսէհապատը դարձել է հայոց բանակատեղին, իսկ բուն ճակատամարտը տեղի է ունեցել գյուղի մերձակայքում, բնականաբար՝ ընդարձակ դաշտում: Ուստի Ղազար Փարպեցին ճակատամարտի ընթացքն ու հաղթական ավարտը ներկայացնելուց հետո գրում է. «**Եւ դարձեալ գունդն Հայոց բարի անուամբ եւ բազում փառաք, լաւ աւարաւ եւ սաստիկ ընչիւք առ պատուական կաթողիկոսն Հայոց Յոհան ի բանակն**»<sup>9</sup>:

Այսպիսով՝ Վահան Մամիկոնյանի ղեկավարած կարևորագույն ճակատամարտը տեղի է ունեցել Արտագ գավառում, որի անվանումը ևս կարող էր հինք դառնալ հայերի տարած փառավոր հաղթանակը անվանակոչելու համար: Հետևաբար՝ ճիշտ կլիներ ուշադրություն դարձնել Արտագ գավառի այն անվանման վրա, որը հաղորդում է Մովսես Խորենացին: Թադեոս առաքյալի գործունեությունն ավանդելիս՝ պատմահայրը գրում է. «**կատարումն առաքելոյն և որք ընդ մմա՝ ի գաւառին Շաւարշան, որ այժմ կոչի Արտագ**»<sup>10</sup>: Մովսես Խորենացին մեկ այլ առիթով տեղեկացնում է նաև, թե ինչպես է տեղի ունեցել գավառի անվանափոխությունը: Նրա վկայության համաձայն՝ Սմբատ Բագրատունին, Արտաշես արքայի հրամանով, վերականգնել է Սաթենիկ թագուհու եղբոր իշխանությունը Ալանաց երկրում և Արտաշատ տեղափոխել ներքաղաքական պայքարում պարտություն կրած ալաններին: Այնուհետև, «**հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարևելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն Արտագ. քանզի և աշխարհն ուստի զերեցանն՝ Արտագ կոչի մինչև ցայսօր ժամանակի**»<sup>11</sup>: Այսպիսով՝ պատմահոր հաղորդմամբ, գավառը նախապես կոչվել է Շավարշական (Շավարշան), իսկ

7 Բավական է ասել, որ Սեբեոսի աշխատության հրատարակիչները ձեռնպահ են մնացել բնագրագիտական դիտարկումներ կատարելուց: Թարգմանիչները բավարարվել են «Գերան» տեղանունը տառադարձելով (տե՛ս Histoire d' Héraclius par l'évêque Sebéos, Traduite de l'arménien et annoté par Fr. Macler, Paris, 1904, p. 3, История епископа Себеоса, перевел с четвертого исправленного армянского издания Ст. Малхасянц, Ереван, 1939, стр. 27), իսկ ծանոթագրելով էլ՝ փաստորեն անորոշ են թողել «Գերանայ դաշտի» տեղորոշման խնդիրը տե՛ս Պատմութիւն Սեբեոսի, Քննական բնագիրը՝ Գ. Աբգարյանի, Արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի, Եր., 2005, էջ 332, ծան. 60: Նրանցից միայն Ռ. Թոմսոնն է ենթադրաբար առաջարկել «Գերանայ դաշտը» տեղորոշել Աղվանքում՝ հիմնվելով ընդամենը տեղանունների պատահական նույնականության վրա, տե՛ս Armenian History Attributed to Sebeos, Part I. Translated, with notes, by R. Thomson, Part II. Historical Commentary by J. Johnston, Assistance from T. Greenwood, Liverpool University Press, 1999, p. 4, not. 21:

8 Ղազար Փարպեցի, էջ 2323:  
9 Նույն տեղում, էջ 2325:  
10 Մովսես Խորենացի, Պատմութիւն Յայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարությունեանի, լրացումները Ա. Սարգսեանի, Եր., 1991, էջ 157:  
11 Նույն տեղում, էջ 182:

Արտագն ավելի ուշ շրջանի անվանում է:

Շավարշակյան (Շավարշան) գավառանունի խնդիրը լուսաբանելու համար պետք է նկատի ունենալ նաև միջնադարյան սրբախոսական գրականության կարևոր հուշարձաններից մեկի՝ «Հացունյաց խաչի պատմության» տվյալները: Ըստ այս երկի՝ Քրիստոսի խաչավիայտը պարսկական գերությունից վերադարձրած Հերակլ (610-641) կայսրը «**եկեալ բանակեցաւ ի դաշտին Արտագու՝ մերձ ի քաղաքն Սանատրուկ Շաւարշայ**»<sup>12</sup>: Մինչդեռ, դեռևս Ղ. Ինճիճյանն է ուշադրություն դարձրել այն փաստի վրա, որ «Հացունյաց խաչի պատմության» որոշ ձեռագրերում այս դեպքերը կատարված են համարվում «**ի դաշտին Գերատայ**» կամ՝ «**ի դաշտին Գերատեայ**»<sup>13</sup>: «Արտագ»-ի փոխակերպումը «Գերատ»-ի ամենևին էլ անսպասելի չէ, քանի որ «Հացունյաց խաչի պատմության» մեծաթիվ ձեռագրերը (Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող գրչագրերի թիվը շուրջ 130 է) ընդօրինակված են ազատ արտագրության սկզբունքով և բազմաթիվ ու բազմազան տարբերություններ են պարունակում<sup>14</sup>:

Ստացվում է, որ Արտագի դաշտը նույնանուն է Գերատա դաշտի հետ, և հնարավոր է դառնում պարզաբանել Շավարշակյան (Շավարշան) տեղանվան առաջացման խնդիրը: Ծիշտ է, բավական ուշ ժամանակի, բայց և այնպես անպայման նկատառելի վկայությամբ, Արտագի (Մակուի) դաշտի անվանումը հին ժամանակներում կապվել է Սանատրուկ (88-110) թագավորի քաղաքաշինական գործունեության արդյունքներից մեկի հետ: Մինչև այժմ Սանատրուկ արքայի կառուցողական վաստակը սահմանափակված են համարում Մծուրք (Մծուրն) քաղաքով, մինչդեռ «Հացունյաց խաչի պատմության» հեղինակը հիշատակում է հնագույն Շաւարշայ քաղաքի մասին՝ նրա հիմնադրումը կամ կառուցումը վերագրելով Սանատրուկ արքային: Ուրեմն՝ միևնույն դաշտը պատմության մեջ հայտնի է եղել երեք տարբեր անվանումով. Շավարշակյան (Շավարշան), Արտագ և Գերատ: Եվ եթե առաջին երկուսը հանրահայտ են դարձել, ապա բավականաչափ վկայված երրորդ տեղանունը զարմանալիորեն գրեթե մոռացության է տրվել:

Ինչ վերաբերում է Շավարշի պատվին քաղաքի կառուցմանը, ապա այս առումով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ Սանատրուկ արքայի հայրանունը վկայված չէ որևէ հայկական կամ հունական սկզբնաղբյուրում: Ըստ Մովսես Խորենացու՝ Սանատրուկը եղել է Աբգար թագավորի քրոջ որդին, ընդ որում նրա կառավարման ժամանակաշրջանի և մասնավորապես Թադեոս առաքյալի գործունեության ու վախճանի մասին՝ «**յառաջագոյն գրեալ յայլոց**»<sup>15</sup>: Դժվար է, իհարկե, պնդել, որ հենց պատմահոր հիշատակած սկզբնաղբյուրն է եղել «Հացունյաց խաչի պատմության» հեղինակի ձեռքի տակ, բայց Շավարշի պատվին գոյություն ունեցած քաղաքի մասին, զոնե՝ ժողովրդական ավանդության տեսքով, որոշ տեղեկություններ նրան, անշուշտ, հայտնի են եղել: Այդ վկայություններն ամենևին էլ անհավանական չեն, եթե դրանք դիտարկենք Արտաշես Ա-ի մասին հայտնի փաստերի լույսի ներքո: Հայոց նշանավոր արքան հինգ քաղաք է կառուցել ի պատիվ իր հայր Զարեհի, հետևաբար Սանատրուկը կարող էր նույնը անել ի հիշատակ հոր՝ հետևելով հելլենիստական քաղաքաշին-

12 «Պատմութիւն սուրբ խաչին Յացունեաց», «Արարատ» հանդես, 1888, էջ 402:

13 Տես Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Յայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 515:

14 Տես Ա. Սահակյան, «Պատմութիւն Յացունեաց խաչին» գրույցը և նրա տիպաբանությունը, ՊԲՀ, 1981, թ. 4, էջ 161-162:

15 Մովսես Խորենացի, էջ 157:

նության մեջ ընդունված ավանդույթին<sup>16</sup>:

Ի դեպ, «**Գերատայ դաշտ**»-ը միայն «Հացունյաց խաչի պատմության» մեջ չէ, որ հիշատակվում է: Անանուն Արծրունին պատմում է, թե ինչպես է թշնամուն պարտության մատնել «**ի վերակացութին գաւառին ճուաշայ և Շամիրամն կոչեալ բերդի**» կարգված Թադեոս Ակեացին: Ստանալով այլազգիների հարձակման մասին լուրը, նա «**զհետ մտեալ սակաւ զօրօք՝ հասանէ նոցա ի դաշտին Գերատայ**» և հաղթում է հակառակորդներին<sup>17</sup>: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ Թադեոս Ակեացին թշնամիների հետապնդումը ձեռնարկել է ճուաշ գավառից և «**Գերատայ դաշտ**» կամ Արտազ է մտել դեպի հյուսիս-արևմուտք արշավելով: Ուշագրավն այն է, որ արաբական երկրորդ արշավանքի առիթով միևնույն ուղին է մատնանշում ժողովրդական ավանդությունների հիման վրա իր երկը շարադրած Անանուն գրուցագիրը. «**բազում աւերումն ած յերկրին ճվաշու և զԳերամ և զԱրտազ և զՀացին և զԿոզովիտ այրեաց առհասարակ և էառ զամուրն Արծափեաց**»<sup>18</sup>: Նրա վկայած «Գերամ»-ը ընդամենը «Գերատ»-ի աղավաղումն է, որը ծագել է «տ» և «մ» տառերի հանրածանոթ շփոթի հիման վրա:

Վերադառնալով հողվածի սկզբում առաջ քաշված հարցադրումներին՝ կարող ենք եզրակացնել, որ «**Գերանայ դաշտ**»-ի ճակատամարտի մասին խոսելիս Սեբեոսը նկատի է ունեցել մեր պատմագրության մեջ Ներսեհապատի անունով հայտնի դարձած անցուդարձերը, և նոր ճակատամարտ փնտրելու կարիք բուրրովին էլ չկա: Թերևս արժե հետազայում շեշտադրել այն հանգամանքը, որ Ներսեհապատի ճակատամարտ անունով պատմության մեջ մտած կռիվները ծավալվել են Արտազի կամ Գերատի դաշտում: «**Գերանայ**» տեղանունը վստահաբար մերժելի է, քանի որ «**Գերատայ-Գերատեայ**» տարբերակը վկայված է նաև այլ սկզբնաղբյուրներում, ընդ որում՝ այն կարդացել են նաև որպես «**Գերադայ**», այսինքն՝ «տ» տարրները ցուցնում, անշուշտ, նախնականն է: Բայց Անանուն գրուցագրի երկում առկա «**Գերամ**» տեղանունը կարող է օգնել բացատրելու «**Գերանայ**» ընթերցման ի հայտ գալու հիմքը: Ամենայն հավանականությամբ, գործ ունենք «մ/ն» հնչյունափոխության հետ, որը կարող էր առաջացած լինել ժողովրդական գրույցներում նախնական «մ»-ն «ն» արտասանելու հետևանքով: Չմոռանանք նաև, որ Սեբեոսի «Պատմության» ամենաիին ձեռագիրը բավական ուշ ժամանակի է (ընդօրինակված է 1672 թվականին), հետևաբար այն բազմաթիվ աղավաղումների է ենթարկվել:

Ավելին, Վահանանց պատերազմի մասին Սեբեոսի հաղորդած տեղեկությունները սերում են բանավոր սկզբնաղբյուրից, և ոչ մի փաստ չունենք ենթադրելու, որ նա ծանոթ է եղել Ղազար Փարպեցու «Պատմությանը» ու առավել ևս, թե՛ Սեբեոսը շարունակել է 5-րդ դարի հանրահայտ հեղինակի երկը: Ընդհակառակը, Սեբեոսի աշխատության կառուցվածքն ու բովանդակությունը հստակորեն ցույց են տա-

16 Տե՛ս Գ. Սարգսյան, Հայաստանի միավորումը և հզորացումը Արտաշես Ա-ի օրոք, «Հայ ժողովրդի պատմություն», ԳԳ ԳԱ հրատ., հատ. I, Եր., 1971, էջ 542:

17 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Դարբինյան-Մելիքյանի, Եր., 2006, էջ 310: Հետազոտողները վաղուց են նկատել, որ «Գերատայ դաշտ» տեղանունը Անանուն Արծրունուց բացի, հիշատակում է նաև «Հացունյաց խաչի պատմության» հեղինակը, տե՛ս Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 222, Ն. Բյուզանդացի, Քննական ուսումնասիրությունք հայ նախնեաց բնագրաց: Ա. Թովմա Արծրունի եւ Անանուն Արծրունի երկու այլեայլ պատմագիրք են, «Բազմավեպ», 1905, էջ 271:

18 Պատմութիւն Անանուն գրուցագրի. կարծեցեալ Շապուհ Բագրատունի, թարգմանությունը բնագրից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Դարբինյան-Մելիքյանի, Եր., 1971, էջ 95: Արտազ տեղանվան վերականգնման մասին տե՛ս էջ 218, ծան. 86:

լիս, որ նա բացառապես Հայաստանում ծավալված դեպքերով սահմանափակվելու, առավել ևս Ղազար Փարպեցուց հետո հերթական «Հայոց պատմություն» շարադրելու նպատակ չի ունեցել: 7-րդ դարի հեղինակը նախ՝ ավանդում է Արշակունիների անկումն ու Վարդանանց պատերազմը և ապա միայն, ընդ որում՝ նախորդից առանձին գլխում, շարադրում է Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության պատմությունը: Հետևաբար նա 5-րդ դարի 80-ական թվականներից չէ, որ սկսել է իր բուն աշխատությունը: Ուստի, ժամանակն է հրաժարվել այն տարածված մտայնությունից, որի համաձայն՝ Սեբեոսը Ղազար Փարպեցու երկի շարունակող է հայտարարվում<sup>19</sup>:

Կարելի է համոզված պնդել, որ առնվազն մինչև 7-րդ դարի 60-ական թվականները, երբ Սեբեոսը գրի էր առնում Վահանանց պատերազմի անցքերի մասին գրույցները, ժողովրդական միջավայրում այդ հերոսական դեպքերի վերաբերյալ տակավին պատմվում էին զանազան ավանդություններ: Անցել էր շուրջ 180 տարի, մոտ երկու դար, բայց միանգամայն ստույգ էին պահպանվել վճռական ճակատամարտի տեղի և հայոց զորքի թվաքանակի մասին տեղեկությունները: Փոխարենը՝ հիմնովին մոռացության էին մատնվել ճակատամարտում հակառակորդների տեղաբաշխման ու կռվի ընթացքի մասին հայտնի փաստերը: Ժողովրդական վեպի տրամաբանության տեսանկյունից այդօրինակ վկայությունները առանձնակի արժեք չեն ներկայացրել և դյուրությամբ անտեսվել են: Ժամանակային խզման հետևանքով հիմնովին աղճատվել են պատմական ժամանակաշրջանը բնութագրող տվյալները: Այսպես, հոները, որոնք 5-րդ դարի հայ պատմիչների տեղեկությունների համաձայն՝ ապստամբած հայերի կողմից դիտարկվել են հնարավոր դաշնակիցներ, Սեբեոսի ապրած դարաշրջանում համարվել են թշնամիներ: Ուշագրավ է, որ Սեբեոսը տուրք էր տալիս պատմական ավանդույթին և Պերոզին պարտության մատնած հեփթաղներին<sup>20</sup> շարունակում էր համարել քուշաններ<sup>21</sup>, որոնք 5-րդ դարի կեսերին պարսից տերության ախտյաններն էին՝ նրա հյուսիս-արևելյան սահմանագծում: Ընդ որում, այդպես վարվելու համար Սեբեոսը որոշակի պատճառ է ունեցել, որովհետև Վարդանանց պատերազմի մասին ավանդելիս նա ակնհայտորեն հիմնվել է գրավոր սկզբնաղբյուրի՝ Եղիշեի աշխատության վրա, ինչի մասին վկայում է հենց ինքը. «այն ամենայն ի ձեռն այլոց գրացաւ, որպէս ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն»<sup>22</sup>:

Փոխարենը, ամենայն հավանականությամբ, բանավոր հիմք ունի Սեբեոսի այն տեսակետը, որի համաձայն Պերոզից հետո «**թագաւորեաց Կաւառ որդի նորա ի վերայ աշխարհին Պարսից**»<sup>23</sup>: Ինչպես ճիշտ նշել է Լեոն<sup>24</sup>, այս դեպքում ևս գործ ունենք ժողովրդական ավանդությունից օգտվելու հետևանքով ծագած սովորական ժամանակագրական վրիպման հետ: Սեբեոսի պնդումը չի համապատասխանում ինչպես պատմական ստույգ փաստերին՝ Պերոզին (459-488) հաջորդել է նրա եղբայր Վաղարշը (484-488)<sup>25</sup>, այնպես էլ պատմիչի ավանդած՝ Սասանյան արքաների ու Բյուզանդական կայսրերի զուգահեռ ցանկերի տվյալներին: Սեբեո-

19 Տես Լ.Բաբայան, Դրվագներ վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V-VIII դարեր), Եր., 1977, էջ 304-305, Ա.Տեր-Ղևոնդյան, Սեբեոս, «Հոգևածների ժողովածու», Եր., 2003, էջ 365:

20 Ղազար Փարպեցի, էջ 2348-2349:

21 Սեբեոս, էջ 470:

22 Նույն տեղում, էջ 468-469:

23 Նույն տեղում, էջ 470:

24 Տես Լեո, նշվ. աշխ., էջ 130, ծան. 1:

25 Տես The Cambridge History of Iran, vol. 3(1), Cambridge University Press, 1983, p. 178:

սի «Պատմության» այս գլխում Պերոզի և Կավատի երկարատև գահակալությունների միջև նշվում է Չամասայի (Չամասայ) երկամյա կառավարումը<sup>26</sup>, որը իրականում իշխել է Կավատ Ա-ի առաջին (488-496) և երկրորդ (498-531) գահակալությունների միջև ընկած տարիներին՝ 496-498 թվականներին<sup>27</sup>:

Այսպիսով՝ Վահանանց պատերազմի մասին Սեբեոսի ավանդած տեղեկությունները կարող են հիմք ծառայել առանձին պատմագիտական հարցեր արծարծելու համար, մանավանդ «**Գերանայ դաշտ**» տեղանվան ճշգրտման առումով, ուստիև որոշակի պատմագրական արժեք են ներկայացնում:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

## Summary

### ON THE “PLAIN OF GERAN” OF THE HISTORY OF SEBEOS

Hayrapet G. Margaryan

The author states that Sebeos (VII century Armenian historian) speaking about the battle of “Plain of Geran” means the battle of Nersehapat which is well-known from the History of Ghazar Parpetsi.

Գ (Թ) փարի, թիվ 1 (33) հունվար-մարտ, 2011

ՎԵՄ համահայկական հանդես

<sup>26</sup> Տե՛ս Սեբեոս, էջ 466-467:

<sup>27</sup> Տե՛ս The Cambridge History of Iran, vol. 3(1), p. 178: